

ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Հայ մտքի և խօսքի զարգացման ու բարգաւաճման գաղափարը ուղեցոյց առնելով մենք 15 տարի առաջ դիմեցինք «Լուսնայի» հրատարակութեան:

Մի կողմից կռիւ մղելով ցենզուրական և նիւթական ծանր հանգամանքների հետ, մենք միւս կողմից, կռիւ էինք մղում հայկական անցեալը ծածկող փոշիի-մոռացման դէմ, հանելով այս կամ այն անկիւնում թաքցրած և կորստի մատնուած պատմական և գրական հարուստ նիւթերը և այդպիսով նպաստում հայկական անցեալի և ներկայի մանրամասն և բազմակողմանի ուսումնասիրութեան:

Անթիւ գոհաբերութիւններով մենք առաջ էինք ընթանում լի յոյսերով, որ հայ կարգացող հասարակութիւնը, ըմբռնելով մեր սկսած գործի օգտակար լինելը, իւր աջակցութիւնը ցոյց կտայ և մենք մասամբ յուսախաբ չեղանք: Լսուեցին խրախուսուող ձայներ և մենք քաջալերուած կրեցինք այդ ծանր բեռը:

Վերջին հնգամեակի ընթացքում, երբ խմբագիր լինելու «մանիան» կամ խմբագրամոլութիւնը տիրեց բոլոր փառասէր անձանց և թերթերը սկսեցին աճել սունկի նման, նոյնչափ կարճատև կեանք ունենալու համար, ևս առաւել ծանրացաւ մեր գործը:

Բայց, հողմը անցաւ. երկինքը պարզուեց. միտքը նորից կենդանացաւ քաղաքակրթութեան գաղափարի վրայ...

Եւ մենք զինուած նոյն գաղափարով շարունակում ենք մեր գործը:

Ազգային յառաջագիմութիւն, ազգային անցեալ և ներկայ կեանքի ու գրականութեան բազմակողմանի ուսումնասիրութիւն և հալածանք՝ դէպի այդգաղափարների արգելք հանդիսացող անձը և գործը:

Ահա մեր մշակական դէպիզը:

Սորանով դիմում ենք մեր դէպիզի համակրող բոլոր անձանց, հրաւիրելով աջակցել մեզ, որովհետեւ «Լուսման» միշտ ծառայել է ընդհանուր շահերի և երբէք՝ անձնական — նիւթականի:

Սիրելի մի ազգ, հասկանալ նրա բացասական և դրական կողմերը, ճիշտ գնահատել նրա ներկայ վիճակը՝ կարելի է միմիայն նրա անցեալի հետ լաւ ծանօթ լինելով: Ահա ինչու աջակցելու մեր անցեալի այդպիսի ծանօթութեան ժողովրդի աւելի լայն շրջանին, մենք իբր փորձ 1910 թուին որոշել ենք տալ մեր բաժանորդներին Եղիշէի Վարդանանց պատմութեան՝ աշխարհաբար նոր թարգմանութիւնը իբրև ձրի յաւելում:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Լ Ո Ւ Ր Ե Ր

■ Մամուլը հազարեց, որ Պետական Դումայում հայ ազգի ներկայացուցիչներից մէկի ճառը ողա հայրենասէրների կողմից անուանուել է հաջող: Տրամաբանօրէն դատելով, ուրեմն «հաշում են բոլոր ողաահայերը, քանի որ հայ ճառախօսը ոչ թէ մի անհատ է այնտեղ, այլ ներկայացնում է ամբողջ ողաահայ ժողովուրդը:

Այժմեան ողա ժողովուրդը երևի պատմութիւն ասած բանից տեղեկութիւն չունի. եթէ նա պատմութիւն գիտենար և այն էլ միայն վերջին 140 տարիների պատմութիւնը, այն ժամանակ նա պիտի փայփայէր այն մի բուռն հսկայ ժողովրդի զաւակներին, որոնց հայրերը, պապերն ու նրանց նախնիքները շատ բան գոհելով, մեծաքանակ արիւն թափելով և իրանց նիւթական ու բարոյական ջանքը չխնայելով, ամբողջ Կովկասը նուաճեցին ողա տէրութեան համար: Եթէ այժմեան ողա ժողովուրդը գիտենար թէ ինչպիսի երախտագիտութեամբ էին յիշում Ռուսիայի ինքնակալները և իրանց նախնիքները հայ ժողովրդին, ինչ պատիւներ էին տալիս այդ ծառայութիւնների փոխարէն, մի փոքր աւելի բարեմտութեամբ կվերաբերուէին դէպի այդ քայքայուած և անտէր հայ ժողովուրդը: